

**«ՋԻ & ԷԼ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ ՆԵՐՔԻՆ ԱՌԻԴԻՏԻ ՏԱՐԵԿԱՆ
ՀԱՇՎԵՏՎՈՒԹՅՈՒՆ 2025Թ ՎԵՐԱԲԵՐՅԱԼ**

1. Ընկերության նկարագիրը, գործունեության ոլորտներն ու նպատակը

«ՋԻ & ԷԼ ԻՆՎԵՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերությունը (այսուհետև՝ Ընկերություն) շահույթ ստանալու նպատակով հիմնադրված, առևտրային կազմակերպություն հանդիսացող իրավաբանական անձ է, որի կանոնադրական կապիտալը բաժանված է բաժնեմասերի՝ իր կանոնադրությամբ սահմանված չափերով:

ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 2019թ-ի սեպտեմբերի 26-ի թիվ 138Ա որոշմամբ Ընկերությունը գրանցվել է որպես ներդրումային ընկերություն (ՀՎՀՀ-05549108):

Համաձայն կանոնադրության Ընկերության գործունեության նպատակն է Հայաստանի Հանրապետությունում ներդրումային ծառայություններ մատուցելու ճանապարհով շահույթի ստացումը: Համաձայն Ընկերության կանոնադրության Ընկերության կանոնադրական կապիտալը կազմում է 75000000 (յոթանասունհինգ միլիոն) ՀՀ դրամ, որը բաժանված է 100000 (մեկ հարյուր հազար) անվանական արժեքով 750 (յոթ հարյուր հիսուն) բաժնեմասերից: Ընկերության կանոնադրական կապիտալն ամբողջությամբ վճարված է և հավասարապես բաշխված է նրա երկու մասնակիցների միջև:

2025 թվականի դեկտեմբերի 31-ի դրությամբ ընկերության աշխատողների թվաքանակը պահպանվել է նույնը և կազմել է 4 մարդ:

Ընկերության ֆիրմային անվանումն է «ՋԻ & ԷԼ ԻՆՎԵՍՏ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերություն, կրճատ՝ «ՋԻ & ԷԼ ԻՆՎԵՍՏ» ՍՊԸ:

Ընկերության գտնվելու վայրը և իրավաբանական (փոստային) հասցեն է՝ ՀՀ, ք. Գյումրի, Տիգրան Մեծի փողոց 1 շենք 2/1:

Ներդրումային ծառայությունների իրականացման համար ՀՀ կենտրոնական բանկի կողմից 2019 թվականի սեպտեմբերի 26-ին Ընկերությանը տրվել է ներդրումային ծառայությունների մատուցման ՆԸ թիվ 0018 լիցենզիան, համաձայն որի Ընկերությունն իրականացնում է՝

1. Հաճախորդներից արժեթղթերով գործարքների կատարման հանձնարարականների ընդունում և հաղորդում,
2. Իր կամ հաճախորդի անունից և հաճախորդի հաշվին արժեթղթերով գործարքների կատարում:

2. Հաշվապահական հաշվառման քաղաքականությունը

Համաձայն <<Հաշվապահական հաշվառման մասին>> ՀՀ օրենքի (հոդված 11, կետ 3, ա. ենթակետ) կազմակերպության համար սահմանվել է կազմակերպության հաշվապահական հաշվառման քաղաքականությունը՝ հաշվապահական հաշվառում վարելու և ֆինանսական հաշվետվություններ կազմելու նպատակով կիրառվող սկզբունքների, հիմունքների, եղանակների, կանոնների, ձևերի և արարողակարգերի ամբողջությունը:

3. Հաշվապահական Հաշվառում եվ Հաշվետվությունների կազմում

Ընկերությունում հաշվապահական հաշվառումը վարվել է ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 2011 թվականի նոյեմբերի 30-ի թիվ 322 -Ն որոշմամբ հաստատված Ներդրումային ընկերությունների հաշվապահական հաշվառման հաշվային պլանին և հաշվային պլանի կիրառման հրահանգին համապատասխան:

Տարեկան ֆինանսական հաշվետվությունները կազմվել են ՀՀ Կենտրոնական բանկի խորհրդի 2011թվականի դեկտեմբերի 20 -ի թիվ 371 -Ն Որոշմամբ հաստատված ձևերով համաձայն <<Հաշվապահական Հաշվառման մասին>> ՀՀ օրենքի պահանջների, ինչպես նաև Հաշվապահական հաշվառման միջազգային ստանդարտներին և գերատեսչական նորմատիվ այլ իրավական ակտերին համապատասխան:

Ընկերության 2025թ-ի ֆինանսատնտեսական գործունեության (ներդրումային և ոչ հիմնական ծառայություններ), ինչպես նաև հիմնական տնտեսական նորմատիվների ստուգմամբ պարզվել է, որ տնտեսական գործառնությունները հաշվապահական հաշվառմամբ գրանցվել ու ֆինանսական և այլ հաշվետվություններում արտացոլվել են ճիշտ:

Ստուգման ընթացքում ուսումնասիրվել են հաշվապահական, ֆինանսական փաստաթղթեր, հաշվետվություններ, բանկային հաշիվների քաղվածքներ, պայմանագրեր:

2025թ. ընթացքում Ընկերությունն ապահովել է ընդհանուր կապիտալի նորմատիվային պահանջը:

Ընկերությունը կառավարում է իր կապիտալը՝ ապահովելու համար գործունեության շարունակականությունը՝ առավելագույնի հասցնելով Ընկերության շահութաբերությունը՝ պարտքի և սեփական կապիտալի հավասարակշռությունն օպտիմալացնելու միջոցով: Ընկերության կապիտալի համարժեքությունը վերահսկվում է՝ ի թիվս այլ միջոցների, ՀՀ կենտրոնական բանկի կողմից սահմանված սահմանաչափերով: Ընկերությունն ապահովել է համապատասխանություն կապիտալի պահանջների հետ կապված բոլոր արտաքին պայմաններին: Ընկերությունը կառավարում է կապիտալի կառուցվածքը և դրանում ճշգրտումներ է կատարում՝ ելնելով տնտեսական պայմանների փոփոխություններից և համապատասխան ակտիվների հետ կապված ռիսկի բնույթից:

Ընկերությունը 2025թ. ընթացքում ՀՀ արժեթղթերի շուկայում կատարել է ոչ մեծ թվով արժեթղթերի առք ու վաճառքի գործարքներ՝ ձգտելով ամրապնդվել արժեթղթերի շուկայում և խուսափել բարձր ռիսկայնությունից: Ընկերության այլ համապարփակ ֆինանսային միջոցով չափվող իրական արժեքով հաշվառվող ֆինանսական ակտիվները 2025թվականին 2024թ համեմատ աճել են 7.8 %-ով՝ կազմելով 97879000 ՀՀ դրամ, իսկ ամորտիզացված արժեքով չափվող ֆինանսական ակտիվները 2024թ համեմատ նվազել են 47%-ով՝ կազմելով 32728000 ՀՀ դրամ: 2025թ. Ընկերության այլ պարտավորությունները կրկնակի նվազել են 2024թ համեմատ: 2025 թվականի ընթացքում ընկերության պահանջները ֆինանսական կազմակերպությունների նկատմամբ կազմում են 2140000 ՀՀ դրամ:

Ընկերության տոկոսային և նմանատիպ եկամուտները 2025թ-ին 2024 թվականի համեմատ աճել են 2.7%-ով, իսկ տոկոսային և նմանատիպ ծախսերը նվազել են 0.9%-ով:

Ընկերության ընդհանուր վարչական ծախսերը 2025 թվականին նվազել են 4.6%-ով 2024 թվականի համեմատ:

Բոլոր պայմանագրերը կատարվել են ժամանակին և չեն արձանագվել պայմանագրային պարտավորությունների կատարման հետ կապված խախտումներ:

Ընկերությունը 2025թ-ի դեկտեմբերի 31-ի դրությամբ չունի արտարժույթով արտահայտված ակտիվներ և պարտավորություններ:

2025թ. կատարված հաշվապահական ձևակերպումները համապատասխանում են Հաշվապահական Հաշվառման Միջազգային Ստանդարտներին և պատշաճ ձևով արտացոլում են Ընկերության ֆինանսական վիճակը:

Ռիսկերի կառավարման գործընթացն ավելի արդյունավետ դարձնելու և ռիսկերը նվազեցնելու նպատակով Ընկերությունը ի սկզբանե սկսել է դիվերսիֆիկացրել իր միջոցները՝ տարբեր բանկերի հետ համագործակցության միջոցով:

3. Արժեթղթերի շուկայում գործունեության իրականացման ընթացքում մասնագիտացված անձի և հաճախորդների միջև առաջացած շահերի բախման դեպքեր և կանխման միջոցներ չեն եղել:

Ռիսկերի կառավարման գործընթացը կազմակերպվում է Ընկերության նպատակներին համահունչ և Ընկերության իրավասու անձանց կողմից այնպիսի գործողություններով, որը հնարավորություն է տալիս ռիսկերի առկայության և անորոշության պայմաններում ապահովել դրական ֆինանսական արդյունք: Ընկերությունը սահմանում և ապահովում է ռիսկերի այնպիսի մակարդակ, որը հնարավոր կլինի ծածկել հասանելի կապիտալի հաշվին, սահմանափակում է ռիսկերի հնարավոր անբարենպաստ ազդեցությունը Ընկերության գործունեության վրա՝ ժամանակին բացահայտելով և գնահատելով ռիսկերի մակարդակի հնարավոր աճը: Ռիսկերի կառավարման ռազմավարությունն առաջնորդվում է անվնասաբերության սկզբունքով և միտված է ապահովելու ներդրումային գործունեության շահութաբերության և ռիսկի մակարդակների միջև օպտիմալ հարաբերակցությունը: Ռիսկերի վերլուծությունը կազմում է Ընկերության ռազմավարական պլանավորման, ինչպես նաև ներդրումային ծրագրերի գնահատման անբաժանելի մասը:

Ռիսկերի ամենօրյա կառավարման գործառույթն իրականացվում է Ընկերության գործադիր տնօրենի կողմից: Գործադիր տնօրենն օրական հետևում է շուկայական զարգացումներին, հավաքագրում և ուսումնասիրում է փորձագիտական գնահատականները, կարճաժամկետ կանխատեսումներ է անում շուկայի վարքագծի վերաբերյալ, բնակցություններ է վարում գործընկերների հետ իրենց սպասումների վերաբերյալ: Այդ միջոցառումների շնորհիվ է, որ Ընկերությունը կարողանում է արդյունավետ կառավարել իր ռիսկերը, որոնցից թերևս ամենաազդեցիկն Ընկերության համար հանդիսանում է իրացվելիության ռիսկը:

Իրացվելիության ռիսկը կառավարելու և վերահսկելու նպատակով Ընկերությունը պարբերաբար կատարում է ընթացիկ և ժամկետային իրացվելիության մոնիտորինգ՝

արտաքին միջավայրի փոփոխության դեպքում իրացվելիության լավագույն իրավիճակին հասնելու համար:

Ամփոփելով, պետք է նշել, որ ռիսկերի արդյունավետ կառավարումը մշտապես գտնվում է Շնկերության ղեկավարության ուշադրության կենտրոնում:

Ներքին աուդիտի ղեկավար



/Վ.Փափազյան/

31.01.2025թ